ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am
Ե/2017- 22.08/ 660
22.08.2017թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Արթուր Դավթյանին

Հարգելի պարոն գլխավոր դատախազ,

2017թ. հուլիսի 17-ին թիվ Ե/2017-17.07/592 գրությամբ Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին:

2017թ. օգոստոսի 21-ին Կազմակերպությունը ստացել է ՀՀ ոստիկանության Ներքին անվտանգության վարչության պետ Ա. Հակոբյանի թիվ 12/795 գրությունը (պատճենը ներկայացվում է կից), համաձայն որի ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչության 2016թ. օգոստոսի 26-ի թիվ 3/8068 գրությունը վերաբերում է նույն վարչության ստորաբաժանումների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումներ չանցկացնելուն, իսկ Մարինա Պողոսյանի նկատմամբ «Ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին որոշման ապօրինի լինելու վերաբերյալ նշվել է, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ կետում նշված «կասկածվում է» եզրույթը նույնական չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված «կասկածյալ» եզրույթի հետ:

Կազմակերպության կողմից թիվ Ե/2017-17.07/592 գրությամբ ներկայացված հանցագործության մասին հաղորդումը Ձեր կողմից հասցեագրվել է այն կառույցին, որի գործողություններին թիվ Ե/2017-17.07/592 գրությամբ ներկայացված հանցագործության մասին հաղորդմամբ պետք է տրվեր իրավական գնահատական: Այսինքն, ՀՀ ոստիկանությունը չէ այն կառույցը, որը ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրած Կազմակերպության հաղորդմանը պետք է պատասխաներ: Ավելին, Կազմակերպությունը ՀՀ գլխավոր դատախազությունից որևէ պատասխան չի ստացել թիվ Ե/2017-17.07/592 գրությամբ ներկայացված հաղորդման վերաբերյալ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ Հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) քրեական գործ հարուցելու մասին.

2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին.

3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին:

Նույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քրեական գործ հարուցելու մասին որոշման պատճենն ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշման պատճենն անհապաղ ուղարկվում է հանցագործության մասին հաղորդած ֆիզիկական կամ իրավաբանական անձին:

Ավելին, վերոնշյալի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «(...) եթե դատախազի կողմից իրեն ուղղված բողոքի կապակցությամբ կայացվել է ցանկացած այլ ակտ և ոչ թե որոշում, ապա այդ ակտը դատական բողոքարկման առարկա հանդիսանալ չի կարող: (...) դատախազի կողմից որոշում կայացնելու դատավարական ժամկետներն անցնելուց հետո ընդհանուր իրավասության դատարան կարող է բողոքարկվել դատախազի անգործությունը, քանի որ քրեադատավարական օրենքով նախատեսված ընթացակարգը չպահպանելն այդ դեպքում հավասարազոր է անգործության»:[1]

Ուստի, ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով վերը վկայակոչված հոդվածները՝ դիմում եմ Ձեզ՝ թիվ Ե/2017-17.07/592 գրությամբ ներկայացված հաղորդման կապակցությամբ համապատասխան որոշումը տրամադրելու պահանջով:

Կից ներկայացվում է ՀՀ ոստիկանության Ներքին անվտանգության վարչության պետ Ա. Հակոբյանի թիվ 12/795 գրության պատճենը:

Հարգանքով՝
Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատ.՝ Հ. Հակոբյան
Էլ. հասցե՝ hhakobyan@hcav.am
Հեռ.՝ 094042268

[1] Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0019/11/09 գործով կայացրած վճիռը :